ԵԴ2/42050/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 2023թ. **ք. Երևան**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր Ս. Ուլիխանյանի, ծանոթանալով «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

07.12.2023 թվականին «Աննարկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ 27.11.2023 թվականի «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/11-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատավոր Ս. Ուլիխանյանին է հանձնվել 11.12.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

«Աննարկա» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականին հունվարի 29-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական տեղեկատվության կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**